ՍԵԲԱՍՏԻԱՅՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԾ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՓԱՅԱՍԼՅԱՆ Ն. Հ.

Հայտնի է, որ միջնադարում սովորություն կար որևէ մասնագիտության գաղտնիքները փոխանցելու սերնդից սերունդ: Այդպիսի մասնագիտացված աշխատանք էր նաև ձեռագրի ստեղծումը: Մեկը պետք է մասնագիտանար ձեռագրի համար անհրաժեշտ նյութեր պատրաստելու մեջ, մյուսը ապագա ձեռագրերի համար պատրաստում էր մագաղաթ կամ թուղթ, թանաք ու ներկ: Կազմարարը պատրաստում էր կաշեպատ կազմը, հնարավորության դեպքում՝ նաև մետաղյա կրկնակազմը (արծաթից, երբեմն ոսկեջրած), որը դրվագում էին, իսկ հաճախ զարդարում թանկարժեք քարերով:

Այդ տեսակետից առանձնանում են Սեբաստիայում XVII դարում ապրած և ստեղծագործած մի գերդաստանի երեք սերունդների ներկայացուցիչներ՝ Թոխաթեցի Բարաղամը, նրա որդի Միքայելը և թոռը՝ Գեորգ անունով: Վերջինս իր մի ձեռագրի հիշատակարանում գրում է հոր ու պապու մասին. «.../յիշեցեք/ մեղապարտ Գէորգ գրչիս եւ ծնօղ, հօր իմոյ Միքայէլի, բազմարհեստ, պայծառ եւ պատուական գրչի, եւ պապուն իմոյ՝ տէր Բարաղամի, մաքրակենցաղ գրչի...»[1]: Ծագումով Եվդոկիա (Թոխաթ) քաղաքից՝ նրանք հիմնականում աշխատել են Սեբաստիայում: Ներկայացնենք այդ գերդաստանի հիշյալ գրիչների ու նկարիչների թողած ժառանգությունը:

Բարաղամի ձեռագրերից Մատենադարանում այժմ պահվում է միայն մեկ Ավետարան՝ գրված 1638 թվին (N 6747): Ձեռագրի հիշատակարանից հայտնի է, որ Բարաղամը եղել է և՛ գրիչ, և՛ ծաղկող, և՛ կազմող. «... ընդ նմին /յիշեցեք/ հեզահոգի զԲարաղամն, որ զարդարել է ծաղկով եւ կազմել, զոր եւ հատուսցէ նմա Տէր զվարձս բարեաց»[2]:

Սեբաստիայի Սբ. Նշան եկեղեցու ձեռագրերի ցուցակում, որը կազմել է Թ. Գուշակյանը, նշված է ևս երեք ձեռագիր, որոնք ընդօրինակել է Բարաղամը՝ Աստվածաշունչ, գրված 1636 թ. (N 1), Շարակնոց, 1644 թ. (N 128), և մեծ Հայսմավուրքը (N 145), որի ստեղծման աշխատանքները տևել են երկու տարի և ավարտվել 1646 թ.[3]:

Դիտարկելով Մատենադարանում պահվող՝ Բարաղամի նկարազարդված Ավետարանի մանրանկարները՝ կարելի է եզրակացնել, որ դրանք իրենց ոճական առանձնահատկություններով բավական հարազատ են Վասպուրականի մանրանկարչական արվեստին: Բարաղամի ձեռքով նկարազարդված Ավետարանի հարդարանքը սակավաթիվ է՝ ավետարա-

նիչների պատկերներ, անվանաթերթեր ու լուսանցազարդեր: Նկարչի տրամադրության տակ եղել են միայն չորս հիմնական գույներ՝ կապույտ, դեղին ու կարմիր. կապույտի ու դեղինի խառնուրդից նկարիչը ստացել է նաև կանաչ գույնը: Խտացրած կանաչ գույնը նա օգտագործել է ավետարանիչների կերպարների ու զարդերի եզրագծերն ընդգծելու համար: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա՝ ավետարանիչների պատկերներն առանձնանում են բավական սխեմատիկ և պարզունակ նկարաեղանակով, մինչդեռ ձեռագրի զարդանախշային (օրնամենտալ) հարդարանքը աչքի է ընկնում գծանկարի ավելի մեծ վարպետությամբ ու հստակությամբ:

Հատկանշական է, որ Բարաղամի ձեռագրի նկարազարդման մեջ նկատելի է որոշակի տարբերություն մարդկային կերպարների և զարդանախշերի ներկայացման մեջ՝ առաջինների որոշ պարզունակությունը կարծես չի համապատասխանում զարդերի ավելի վարպետորեն մշակման ունակությանը:

Դա եզակի երևույթ չէ: Բազմիցս կարելի է նկատել, որ նույն ձեռագրի նկարազարդումներում մարդկային ֆիգուրների կատարման, նրանց նկարչական արտահայտման միջոցների պարզունակությունը զուգակցվում է զարդանախշային ձևերի ու կենդանական աշխարհի էակների պատկերների կատարման ավելի մեծ վարպետությամբ ու հստակությամբ: Այդ երևույթը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ զարդանախշային հարդարանքի պատկերման եղանակները, ընդհանրապես, ձևավորվել են շատ ավելի վաղ ժամանակներում: Դրանում դժվար չէ համոզվել, եթե ուշադիր զննենք բազմաթիվ իրական և հեքիաթային կենդանիների ու թռչունների պատկերները, որոնք հանդիպում են հայկական ձեռագրերի խորաններում, անվանաթերթերում, ինչպես նաև լուսանցքներում: Դրանք պատկերված են ոչ միայն ավելի մեծ վարպետությամբ, այլև ունեն կարծես կանոնացված, որոշակի ձևեր: Դրանց բազմաթիվ ու բազմապիսի տարբերակները որոշակի կապ ունեն այն պատկերների հետ, որոնք պահպանվել են ավելի հին թե՛ նկարազարդ ձեռագրերում, թե՛ եկեղեցիների ռելիեֆային քանդակներում և կապված են հնագույն հեթանոսական արվեստի հետ:

Խոսելով Աղթամարի տաճարի բարձրաքանդակների կենդանակերպ պատկերների և սասանյան հնագույն արվեստի հետ կապի մասին՝ Հ. Օրբելին[4] և Ս. Տեր-Ներսեսյանը[5] այդ կենդանակերպ պատկերների ակունքները տեսնում են Առաջավոր Ասիայի ժողովուրդների հին առասպելական պատկերացումների ոլորտում, որոնք արտացոլվում են նաև սասանյան արվեստում: Այդ կերպարները տարածում էին ստացել հիմնականում սասանյան կիրառական արվեստի բազմաթիվ առարկաների շնորհիվ, որոնց առևտուրը մեծ ծավալների էր հասնում: Մերձավոր Արևելքի բազմաթիվ ժողովուրդների մշակույթներում սասանյան արվեստի հետ նկատվող հարազատությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ արվեստն ինքնին ձևավորվել էր նույն այդ մշակույթների սինթեզի հիման

վրա: Այդ կապակցությամբ Հ. Օրբելին գրում է. «Բազմաթիվ երևույթներ, որոնք հեշտությամբ կարող են ընկալվել որպես սասանյան արվեստի ազդեցություն այլ երկրների ու այլ արվեստների վրա, իրականում այդ ժողովուրդների ավանդն են իրանական արվեստի գանձարանում»[6]:

Սասանյան արվեստը սնող աղբյուրներից մեկն էլ հին Հայաստանի արվեստն էր: Հին ուրարտացիների ու ասորեստանցիների արվեստից սկիզբ առնող հայկական արվեստը երկար ժամանակ պահպանում էր հնուց եկած առասպելական պատկերացումների արձագանքները, պանթեիզմի և տոտեմիզմի հետ կապված գաղափարները:

Այդ հնագույն արվեստի արձագանքները շարունակում էին գոյատևել նաև միջնադարում, հիմնականում ձեռագրերի զարդանախշային հարդարանքներում՝ եկեղեցիների ու քաղաքային շինությունների քանդակազարդերում:

Շատ ավելի հարուստ ստեղծագործական ժառանգություն է թողել Բարաղամի որդի Միքայելը, որի ընդօրինակած և նկարազարդած տասնմեկ ձեռագիր է հասել մեզ: Այդ ձեռագրերից հինգը պահվում են այժմ Մաշտոցի անվ. մատենադարանում (NN 6518, 1547, 1149, 1370, 93), մեկը՝ Ֆրիերի պատկերասրահում (N 36.15), և հինգը՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մատենադարանում (N 1918, 2010, 2285, 3144, 3156): Մի վարպետի ձեռքով կատարված և մեզ հասած այդպիսի հարուստ ստեղծագործական ժառանգությունը երջանիկ բացառություն է, քանի որ Արևմտյան Հայաստանը առավել շատ է տուժել Եղեռնի օրերին, երբ բազում ձեռագրատներ են հափշտակվել ու քանդվել: Իսկ այն ձեռագրերը, որոնք հասել են մեզ, մեծ դժվարությամբ փրկվել են գաղթի ճանապարհը բռնած ժողովրդի ջանքերով:

Բարաղամի որդի Միքայելը պատկանում է իր ժամանակի ակնառու նկարիչների թվին: Նա հմտորեն տիրապետել է մանրանկարչական արվեստի տեխնիկական բոլոր հնարքներին: Նրա մանրանկարները առանձնանում են գծագրի ճկունությամբ, կերպարների բազմազանությամբ, պատկերների նրբին մշակմամբ: Միքայելը պատկանում է այն եզակի նկարիչների թվին, որոնք գրեթե հավասար հաջողությամբ ստեղծում էին և՛ մարդկային կերպարները, և՛ զարդանախշային հարդարանքները:

Ձեռագրեր նկարազարդելիս նկարիչն օգտվել է Սեբաստիայի Սբ. Նշան եկեղեցու գրչատանը պահվող ձեռագրերի լավագույն օրինակներից: Վերջինների թվում կային նաև կիլիկյան մատյաններ: Ս. Տեր-Ներսեսյանը հրատարակել է Ֆրիերի արվեստի պատկերասրահում պահվող Միքայելի նկարազարդած մի Ավետարանի մանրանկարները: Այդ ձեռագիրը, ինչպես նշում է հեղինակը, նկարիչն ընդօրինակել է Թորոս Ռոսլինի 1262 թ. Ավետարանից: Դա 1602 թվականին գերությունից ազատել է Պատվական Սեբաստացին: Այն ինչ-որ ժամանակ գտնվել է Սեբաստիայում և որպես գաղափար՝ օրինակ ծառայել տեղի ծաղկողների համար[7]:

Օգտագործելով որպես նախօրինակ Սբ. Նշան եկեղեցու դպրատանը պահվող տարբեր ձեռագրեր՝ նկարիչը ստեղծում է դրանց ինքնուրույն, միայն իր մտահղացմանը համապատասխան տարբերակներ:

Միքայելի՝ 1660 թ. նկարազարդած Ավետարանը (Մատ. 6518) առանձնանում է ուրույն նկարաեղանակով: Նա նուրբ ճաշակի տեր նկարիչ էր: Արտակարգ գեղեցիկ է այդ ձեռագրի զարդանախշային հարդարանքը: Խորանների համար Միքայելն օգտագործել է ընդամենը երկու գույն՝ բաց կարմրավուն (բաց կրապլակին նմանվող, որը ստանալու համար վարպետը օգտագործել է որդան կարմիրը) և բաց կապտավուն: Այդ երկու գույների օգնությամբ նկարիչը ստեղծել է գեղեցիկ ու նուրբ զարդեր, որոնք նմանվում են ծակոտկեն ասեղնագործ ժանյակների:

Այս ձեռագրի ավետարանիչների պատկերները Միքայելը չի ավարտել՝ գծագրել է և թեթև գունավորել միայն նրանց եզրագծերը՝ բաց կապույտ, մանուշակագույն ներկերով՝ հազվադեպ օգտագործելով թույլ կարմիրը և դեղին գույնով ծածկելով ավետարանիչների լուսապսակները:

Միքայել Թոխաթեցին գծանկարի մեծ վարպետ էր: Ավետարանիչներին պատկերող մանրանկարների խորքում պատկերված են ճարտարապե-տական կառույցներ՝ գծանկարված թեթև, մոխրագույն ուրվագծերով: Այսպես, Մատթեոս ավետարանչի հետևում՝ աջից, նուրբ գծագրված է եկեղեցու պատկերը, ձախից՝ փոքրիկ տաճարիկ, անմիջապես առջևից՝ սեղան հիշեցնող առարկան՝ ծածկված նուրբ զարդերով. կարծես հիշեցնում է ինչ-որ կառույցի մաս: Մատթեոսը նստած է բարձր փայտյա նստարանին, որը հարդարված է փորագրված գեղեցիկ զարդերով:

Մարկոս ավետարանիչը պատկերված է համաձայն դեռևս վաղ միջնադարից ընդունված պատկերագրության՝ մտազբաղ, ձեռքը բարձրացված՝ ծոծրակին:

Ղուկասը սովորաբար պատկերվում էր գրելիս, սակայն այստեղ տեսնում ենք, որ ավետարանիչը բարձրացրել է ձեռքը, բայց անհրաժեշտ այդ պատկերում *գրկակալը ձեռագրով* բացակայում է: Քանի որ նկարը անավարտ է, անկասկած, նկարիչը չի հասցրել այն պատկերել: Առհասարակ, այդ ձեռագրի ավետարանիչների պատկերները թողնում են անավարտ նկարների տեսք, իսկ Հովհաննես Պրոխորոնի հետ մանրանկարն ընդհանրապես խորք չունի: Ինչ-ինչ պատճառով Միքայելը չի ավարտել իր աշխատանքը այս ձեռագրում, բայց և այս վիճակով Ավետարանի մանրանկարները շատ հետաքրքիր են: Փաստորեն, մենք տեսնում ենք վարպետի աշխատանքի սկզբնական փուլը, որը թույլ է տալիս հասկանալ նկարչի, այսպես ասած՝ աշխատանքային «խոհանոցը»: Ընդ որում, այդ «խոհանոցը» արտակարգ մաքուր է և ուսանելի. լավ երևում է նկարչի աշխա-տանքի մեթոդը:

Միքայելի այս մանրանկարի խորքում պատկերված ճարտարապետական կառույցները թեև գունազարդված չեն, բայց ներկայացնում են մանրանկարչության մեջ ճարտարապետական գծագրությունների եզակի օրինակներ:

Ի տարբերություն ավետարանիչների պատկերների՝ այս Ավետարանի անվանաթերթերն ունեն ավելի ավարտուն տեսք: Դրանց կատարման եղանակն այլ է: Այստեղ տեսնում ենք սովորական կանոնիկ ձևեր և թեև

հմտորեն կատարված, սակայն սովորական նկարաեղանակով: Թվում է՝ անվանաթերթերը կատարվել են այլ նկարչի, հնարավոր է՝ Միքայելի աշակերտի ձեռքով:

1687 թ. Միքայել Թոխաթեցին ընդօրինակել է Սարգիս Շնորհալու մեկնությունները (Մատ. N 1370): Այս ձեռագրում Միքայելը հանդես է գալիս որպես դիմապատկերների մեծ վարպետ: Մեծադիր մատյանի առանձին գլուխները, որոնցում զետեղված են քրիստոնեական գործիչների ասույթներն ու վարքերը, սկսվում են նրանց դիմապատկերներով՝ Հակոբոս կաթողիկոսի, Պետրոս Առաքյալի, Հովհան Աստվածաբանի և քրիստոնեական այլ գործիչների ու սրբերի: Նրանցից յուրաքանչյուրը հասակով մեկ պատկերված է համապատասխան գլխի սկզբում: Սակավ գույների օգնությամբ և իրեն հատուկ գրաֆիկական եղանակով Միքայելը կա-րողանում է ստեղծել տպավորիչ կերպարներ ճարտարապետական բարդ կառույցների ֆոնի վրա: Առաջին գլխի սկզբում նկարիչը պատկերել է Հակոբոս կաթողիկոսին: Կաթողիկոսը հանդիսավոր նստած է եկեղեցու առջև: Մանրանկարի ստորին մասում գրված է. «Առաքելոյդ Յակոբոսի կաթողիկեայց նախագծողի, Համշիրակի տէառն Յիսուսի, արդարանուն Հայրապետի»:

Միքայելը կարողանում է ճիշտ կառուցել մարդկային մարմինները, իսկ պատկերվող կերպարներին հաղորդել ակնառու անհատականացված գծեր: Որոշ պայմանականությունը ճարտարապետական կառույցներ պատկերելու մեջ չի խանգարում դրանցում որոշ միտումներ նկատելու հեռանկարային պատրանք ստեղծելու համար, երբեմն զգացվում է տարբերություն առաջին և երկրորդ պլանում պատկերված կառույցների միջև: Սակայն դա զուգակցվում է որոշ պայմանականության հետ, ինչը դրսևորվում է զարդանախշի ակտիվ օգտագործմամբ, թեև այդ զարդանախշերը որոշ չափով ընկալվում են որպես կառույցների քանդակազարդեր:

Նոր միտումները նկարչի արվեստում վկայում են այն մասին, որ նա, անշուշտ, ծանոթ է եղել ժամանակի եվրոպական արվեստին: Վերջինի հետ առնչվելու համար կային բազմաթիվ առիթներ. եվրոպական վարպետների գործերը՝ սրբապատկերները, նկարազարդ ձեռագրերը, հնատիպ գրքերը՝ հարդարված փորագրական տեխնիկայով, որոնք բերվում էին վաճառականների միջոցով:

Միքայելի մանրանկարները առանձնանում են ճարտարապետական բարդ շինությունների կառուցմամբ: Թեմատիկ մանրանկարներում, ինչպես նաև սրբերի պատկերներ նկարելիս ընդունված էր խորքում պատկերել ճարտարապետական շինություններ, հիմնականում եկեղեցիներ, որոնք երբեմն զուգակցվում էին յուրատիպ աշտարակներով: Դրանք իրենց տեսքով հիշեցնում են մինարեթներ, որոնք թուրքերը կառուցում էին զավթած և մզկիթներ դարձրած եկեղեցիներին կից: Որոշ չափով այդ կառույցները հիշեցնում են Կոստանդնուպոլսի Սբ. Սոֆիայի բյուզանդական տաճարը: Նման համեմատության համար կան որոշակի հիմքեր: Սեբաստիայի և Կոստանդնուպոլսի հայ հոգևորականության կապերը բավական աշխույժ էին: Քիչ չէին դեպքերը, երբ գրիչները կամ ծաղկողները մի կենտրոնից մյուսն էին հրավիրվում ձեռագիր կատարելու համար: Այսպես օրինակ, պոլսեցի վարպետ Մարկոսը ձեռագիր է

ընդօրինակել Սեբաստիայի Սբ. Նշան եկեղեցուն նվիրաբերելու համար, իսկ Հակոբ Թոխաթեցի գրիչը 1704 թվականին մի ժողովածու է ընդօրինակել Կոստանդնուպոլսում[8]:

Միքայելի պատկերած կերպարները գեղեցիկ են, ունեն ճիշտ համաչափություններ: Առավել հաջողված են նկարչի կերտած մարդկային դեմքերը Երուսաղեմի N 1918 ձեռագրի մանրանկարներում: Դրանցից մի քանիսը հրատարակված են Երուսաղեմի հայերեն ձեռագրերի ցուցակում: Այդ ձեռագրերից մեկը մի մեծ Հայսմավուրք է, որը պարունակում է մի քանի տերունական նկարներ. այսպես, 16-րդ էջում պատկերված են Հովհաննես Մկրտիչը, Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորը՝ վարազի տեսքով: Այդ երկու կարևորագույն քրիստոնեական սրբերը երբեմն պատկերվում էին միասին՝ Հովհաննես Մկրտիչը կամ Կարապետը՝ Քրիստոսի առաջին վկան, և Գրիգոր Լուսավորիչը՝ Հայաստանում քրիստոնեությունը առաջինը հաստատողը: Հովհաննես Մկրտիչը պատկերված է՝ համաձայն պատկերագրական ընդունված տարբերակի. հագուստը վկայում է անապատում անցկացրած ծանր օրերը՝ մորթիով ծածկված, գավազանը ձեռքին, բոկոտն, մինչդեռ Գրիգոր Լուսավորիչը՝ հանդիսա-վոր կաթողիկոսական զգեստով: Նրա մի ձեռքին գիրք է, մյուսին՝ գավազան:

484ա թերթում պատկերված է Հարության մեծադիր մանրանկարը: Այստեղ պահպանվել է նկարչի հիշատակարանը. «Զնուաստ ոգի զծաղկող սուրբ գրոցս զՄիքայէլ գրիչ, եւ զծնողս իմ, զտէր Բարաղամ գրիչն յիշեսջիք մաքուր աղոթիւք…Ծաղկեցաւ Յայսմաւուրքս ի քաղաքս Թոխաթ ի թուին ՌՃԽԹ» (1700 թ.):

Արտակարգ հաջողված է Միքայելի նկարած «Քրիստոսի Հարություն» տեսարանը: Հորինվածքը բաժանված է երկու մասի: Ներքևում պատկերված են յուղաբեր կանայք և հրեշտակի հայտնությունը նրանց, վերևում՝ Քրիստոսի հայտնությունը աշակերտներին:

Ե՛վ ձեռագրերի հիշատակարանները, և՛ մանրանկարների տակի գրությունները Միքայելը հաճախ շարադրում է չափածո. մի հանգամանք, որը մատնանշում է նրա ևս մի շնորհքը. հնարավոր է, որ Միքայելը եղել է նաև բանաստեղծ:

Ձեռագրի գլխավոր հիշատակարանը գրված է 119ա թերթում. «Արդ, յերէս անկեալ աղաչեմ զհանդիպողսդ սուրբ տառիս, ընթերնելով կամ օրինակելով, յիշել մաքուր աղօթիւք զստացող մեկնութեանս զՄինաս քաջ բաբունապետն յամտեցի, որ ստացաւ զսա յանարժանութենէ իմմէ, Միքայէլէ որդւոյ Բարղամ գրչի, որ ետ զարդարել եւ շքեղացուցանել ոսկով դեղիւք, առ ի սիրուն լինել ի զուարճանս եկեղեցւոյ, որոց ողորմի Քրիստոս Աստուած, ամէն»:

Ի տարբերություն թեմատիկ նկարների ու դիմապատկերների, որոնք Միքայելը կատարում է նուրբ գրաֆիկական եղանակով, նշված ձեռագրի զարդանախշային հարդարանքը կատարված է՝ համաձայն ազգային արվեստի հնագույն ավանդույթների: Նկարիչն օգտագործում է գույների վառ և հյութեղ երանգները: Արտակարգ գեղեցիկ են նկարագրվող ձեռա-

գրի անվանաթերթերը: Դրանք ունեն երկրաչափական տարբեր կտրվածքով գլխազարդեր, ընդ որում, ամեն անգամ դրանց և՛ հարդարանքը, և՛ կառուցվածքը տարբեր են: Ի տարբերություն թեմատիկ նկարների, որոնց գունազարդումը հիմնականում մեղմ է, անվանաթերթերը ճոխ գունավորված են թանձր ու պայծառ ներկերով: Առանձնակի շեշտվածությամբ ներկայացվում է տեքստի առաջին տողը:

Միքայելի որդիներից միայն Գեորգն է հայտնի որպես գրիչ ու ծաղկող: Նրանից մեզ է հասել միայն մեկ ձեռագիր՝ 1704 թվականի Հայսմավուրքը (Մարտ. N 3778): Ձեռագրի հիշատակարանում /թերթ 486ա/ կարդում ենք. «Եւ ես, Թոխաթցի անարհեստ եւ մեղապարտ Գէորգ գրիչս... (յիշեսջիք) եւ ծնօղ իմոյ Միքայէլի բազմարհեստ պայծառ եւ պատուական գրչի, եւ պապուն իմոյ տէր Բարաղամի մաքրակենցաղ քահանայի եւ արհեստաւոր գերահռչակ գրչի, եւ դեռաբոյս որդեկաց իմոց՝ Սիմէոնի եւ Անտոնի եւ այլոց իմոց ազանց եւ խրատատու երախտաւորաց»:

Այդ ձեռագիրը Գեորգ Թոխաթեցին ընդօրինակել է իր հոր՝ Միքայելի կերտած մատյանից: Գեորգի ձեռագրում պահպանվել են երեք մեծադիր մանրանկարներ, որոնք նույնությամբ կրկնում են Միքայելի նկարազարդ Հայսմավուրքի մանրանկարները:

Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ թագավորը՝ վարազի կերպարանքով, և Հովհաննես Մկրտիչը պատկերված են 7բ թերթում: Նրանց մի փոքր երկարացված կերպարները պատկերված են ճարտարապետական բարդ կառուցվածք ունեցող շինության առջև: Որպես օրինակ օգտագործելով Մի-քայելի ձեռքով նկարազարդ Հայսմավուրքը՝ Գեորգը աշխատում է նույնությամբ կրկնել Միքայելի պատկերած ոչ միայն մարդկանց կերպար-ները, այլև խորքում նկարված շինությունները, միայն մի տարբերությամբ՝ եկեղեցու կողքին նա նկարել է ոչ թե մինարեթներ, այլ վառվող մոմեր:

Գեորգի նկարազարդած Հայսմավուրքի մնացած երկու նկարները պատկանում են տերունական շարքին՝ «Մոգերի երկրպագությունը» և Քրիստոսի հարության հետ կապված տեսարանները՝ «Յուղաբեր կանայք» և «Քրիստոսի հայտնությունը աշակերտներին», որոնք նույնությամբ կրկնում էին Միքայելի՝ նույն բովանդակություն ունեցող մանրանկարը:

Ի տարբերություն Միքայելի՝ Գեորգն առանձնապես հմուտ է ձեռագրի էջերը զարդարելու յուրօրինակ, ոչ սովորական զարդանախշերով: Հատկապես նշելի են քննվող ձեռագրի անվանաթերթերը: Կոմպոզիցիոն ընդհանուր համակարգի մեջ առանձնանում են այդ էջերի նուրբ ու գեղեցիկ լուսանցային պատկերներն ու զարդերը: Հատկապես հետաքրքիր են Գեորգի ձևավորած անվանաթերթերը: Դարերի ընթացքում ձեռագրի հարդարման համար ձևավորվել և կանոնացվել են որոշակի զարդահարդարանքներ՝ կազմված կիսաարմավենիկներից, ոճավորված նախշազարդերից, որոնք իրենց վերին մասում սովորաբար ավարտվում էին խաչով: Գեորգը, քաջ տիրապետելով այդ ավանդական զարդաձևերին (ինչի ապացույցն է նույն ձեռագրի 286ա էջում ավանդական ձևով հարդարված անվանաթերթը), դրանց մեծ մասը ներկայացնում է պարզապես իրական ծաղիկներից կազմած ազատ զարդաձևեր, որոնց նմանը չի հան-

դիպել մինչև այդ հայկական նկարազարդ ձեռագրերում: Լուսանցքներում տեղ-տեղ նկարված են նաև առանձին սրբերի պատկերներ, նույնպես ոչ սովորական նկարաեղանակով՝ առավել ազատ կեցվածքներով: Առանձնապես հետաքրքիր է ներկայացված Սբ. Ստեփանոս Նախավկայի կերպարը՝ աբեղայի զգեստավորումով, բուրվառը և ձիթամանը ձեռքերին: Սուրբ Ստեփանոսի պաշտամունքը տարածված էր Հայաստանում, և երևի դրա հետ էր կապված, որ հայկական Հայսմավուրքներում պատկերվող սրբերից ամենից հաճախ պատկերում էին Սուրբ Ստեփանոսին: Սակայն Գեորգի նկարազարդ ձեռագրում առավել մեծ տեղ է հատկացված տարբեր տիպի ծաղիկների պատկերմանը, որոնք առանձնակի շուք են հաղորդում նրա ծաղկած ձեռագրին:

Սեբաստիայում ու Թոխաթում ստեղծված և մեզ հասած նկարազարդ մատյանները թույլ են տալիս եզրակացնելու, որ ժամանակին այստեղ գոյություն է ունեցել մանրանկարչական մի ուրույն դպրոց:

О СЕМЬЕ МИНИАТЮРИСТОВ, ТВОРИВШИХ В СЕБАСТИИ

ПАЯСЛЯН Н. Г.

Резюме

Главой семьи талантливых миниатюристов, творивших в XVII в. Себастии, был Барагам Тохатеци – известный писец, миниатюрист и переплетчик. Его сын Микаел был одаренным художником и поэтом, а внук Геворг – писцом.

В Институте древних рукописей им. М. Маштоца – Матенадаране хранится лишь одно Евангелие, написанное и иллюстрированное Барагамом, стиль миниатюр которого восходит к васпураканским иллюстрированным рукописям.

Самым талантливым из этой семьи художников-миниатюристов был Микаел. Сохранилось одиннадцать рукописей, написанных и иллюстрированных Микаелом Тохатеци, которого по праву можно назвать выдающимся для своего времени миниатюристом.

У него четкий, изящный рисунок, персонажи его миниатюр наделены особой экспрессией, а орнаментальные узоры выполнены с большим мастерством.

Дошедшие до нас образцы миниатюр, созданных в Себастии в XVII в., явствуют о наличии здесь высокопрофессиональных школ письма и книжной живописи.